ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2019-2021թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ)













2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրլ 369.8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.9%-ով, 2020թ սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 14.1%-ով և 2019թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 30.2%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրլ 140.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.5%-ով, 2020թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 15.2%-ով և 2019թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 33.1%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 229.0 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.6%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2019թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 6.1%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 38.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 13.4%-ով, 2020թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 15.1%-ով, 2019թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 28.2%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 564.5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14.1%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 16.1%-ով, 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 31.0%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 473.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.1%-ով, իսկ 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 1.4%-ով և 7.5%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրլ 993.8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.4%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 11.7%-ով, 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 24.95%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրլ 147.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14.6%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 25.3%-ով, 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 60.2%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 229.0 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.6%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2019թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 6.1%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 192.0 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.7%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 12.6%-ով, 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 23.0%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 372.5 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 23.9%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 26.3%-ով, 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 57.7%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 473.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.1%-ով, իսկ 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 1.4%-ով և 7.5%-ով:

ԱԺԲԳ













ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 496.4 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.6%-ով, 2020թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 1.6%-ով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ աճելով 11.0%-ով:

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.93%, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.02 տոկոսային կետով, 2020թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից՝ 1.0 տոկոսային կետով, 2019թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.83 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.68%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.97 տոկոսային կետով, 2020թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 0.95 տոկոսային կետով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 0.72 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.39%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019 թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.05, 0.05 և 0.11 տոկոսային կետով:

2021թ. հունվար- սեպտեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 127.59 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 9.91 մլրդ դրամով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 9.80 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 65.92 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11.31 և 20.01 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 61.67 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.4 մլրդ դրամով, իսկ 2019թ.նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 10.21 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2020թ. հունվար- սեպտեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 491.1 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 239.16 և 394.77 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 156.1 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 49.85 մլրդ դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 82.16 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 335.0 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 289.01 և 312.61 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. հունվար-սեպտեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 52.2 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2020թ. և 2019թ .նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 26.1%-ով և 24.8%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 169.6 մլն դոլարի մայր գումար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 8.9%-ով և 43.4%-ով,

3) ստացվել են 85.8 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 75.2%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.9%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 221.9 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.0%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 18.2%-ով:

ԱԺԲԳ

## Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ




## Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր




## ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




## ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %




2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 116.8 մլրդ դրամ, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 158, 241.4 և 458.7 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3905 օր, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 40 օրով, 2020թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ 46 օրով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ 343 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4.53, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշից ավել է 0.25 տոկոսային կետով, 2020թ.սեպտեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.04 տոկոսային կետով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է 0.45 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.13%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.09 տոկոսային կետով, 2020թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.02 տոկոսային կետով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշի համեմատությամբ մեծ է 0.35 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 7.33%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար 1.02, 1.02 և 0.65 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 90.96%, ինչը 2020թ . դեկտեմբերի 31-ի, 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար 1.02, 1.0 և 1.01 տոկոսային կետերով:

**Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական և տարեկան տեղեկագրերը**

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի




Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %




ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %




ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %




ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 8.6 տարի: Այս ցուցանիշը 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից պակաս է 0.22 և 0.43 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 11.13%, որը 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.01 և 2.52 տոկոսային կետերով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.62%, լողացող տոկոսադրույքով՝ 17.38%: Ընդ որում, 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2020թ. սեպտեմբերի 30-ի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.83 տոկոսային կետով, իսկ 2019թ. սեպտեմբերի 30-ի նույն ցուցաիշից պակաս է 2.16 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 72.3%, ներքին պարտք՝ 27.7%: Ընդ որում, 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2020թ. և 2019թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 2.24 և 4.69 տոկոսային կետերով:

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական և տարեկան տեղեկագրերը